ԾՈՎՆ ԱՌԱՆՑ ԱՓԵՐԻ

Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասում բնությունը ստեղծել է մի յուրահատուկ հրաշք՝ ծով առանց ափերի, դա Սարգասյան ծովն է: Ծովն իհարկե որոշակի սահմաններ ունի, բայց դրանք այլ ծովերի նման ցամաքային չեն, այլ հզոր օվկիանոսային հոսանքներ: Հյուսիսում և արևմուտքում Սարգասյան ծովի «ափերն» են Հյուսիսատլանտյան ծովային հոսանքն, արևելքում՝ Կանարյանն, իսկ հարավում պասատներն են, որոնք պտտվում են ժամացույցի սլաքի ուղղությամբ: Այս հոսանքները գործում են իբրև պատնեշներ, արգելակելով Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասի սառը ջրերի թափանցումը Սարգասյան ծով: Ի տարբերություն ցամաքային ափերի, ծովային հոսանքները տեղաշարժվում են և Սարգասյան ծովի օվալաձև մակերեսը պարբերաբար 8.5 միլ կմ²-ից նվազում է մինչև 4 միլ կմ², ապա ընդարձակվում: Ծովը մի այլ առանձնահատկություն ևս ունի, այն իսկական «բանջարանոց» է օվկիանոսի մեջ: Այստեղ ծովային ջրիմուռների ամենամեծ կուտակումն է աշխարհում: Այս ծովը և նրա զարմանալի բուսականությունը հայտնաբերել է Քրիստափոր Կոլումբոսը 1492թ.: Սարգասյան ծովի ջրիմուռները, չնայած այդքան մեծ տարածք են գրավում՝ մեկ տեսակի են:

Պորտուգալացի ծովայինները այս ջրիմուռներն անվանեցին «սարգասսո», քանի որ դրանք ամբողջովին պարուրված էին օդի պղպջակներով, ինչի շնորհիվ էլ լողում էին ջրի երեսին: Այսպիսի անուն ուներ այն ժամանակ Պորտուգալիայում տարածված խողողի մի տեսակ, որից փրփրուն գինի էր ստացվում:

Սարգասյան ծովի ջրերը ավելի աղի են, քան իրեն շրջապատող Ատլանտյան օվկիանոսինը, ջրի ջերմաստիճանը նույնպես բարձր է: Տարվա բոլոր ամիսների ծովը հանդարտ է, ունի վառ կապույտ գույն, ջուրը շատ թափանցիկ է, ջրիմուռների այս անծայրածիր տարածքներում բնակվում են խեցգետիններ, տարատեսակ ձկներ: